



ԱՄԱՆՈՐՅԱ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԱՄԱՆՈՐՅԱ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՂԱԶԱՐԱՊԱՏԻ ՎԱՆԱԿԱՆ ՍԵՂԱՆԱՏԱՆԸ

Հին տարվա մայրամուտի և նոր տարվա արշալույսի ակնթարթային միացմանը երբեք չի կարող անտարբեր մնալ որևէ գիտակից մարդ, որ ապրում է այս աշխարհում և զգում ժամանակի տրոփյունը:

Ողջ մարդկությունը ցնծությամբ է դիմավորում նոր տարին:

Ամեն ոք նոր տարվա սեմին խորը կայտառություն է զգում իր մեջ, ուժ ստանում, ներշնչվում:

Նոր տարին այն հանգրվանն է, որը հիմնովին վերափոխում է մարդուն, կրկին դարձնում երիտասարդ, կրկին զինում ավյունով, պատանեկան եռանդով, որպեսզի մարդիկ կարողանան իրենց լավագույն երազները իրականություն դարձնել:

Այս տարի նույնպես, ինչպես նախորդ տարիներին, Մայր Աթոռի միաբանությունն ու հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը ու ուսանողությունը, գլխավորությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, սրտի խոր հուզումով են դիմավորում նոր տարին:

Դեկտեմբերի 31-ին, երեքշաբթի, երեկոյան ժամը 20-ին, երկար տարիներից հետո առաջին անգամ լինելով, Ղազարապատի միաբանական սեղանատանը տեղի է ունենում ամանորյա հանդիսություն՝ գլխավորությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Հանդիսությանը ներկա են լինում Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը:

Ամանորյա զարդարանքներով գեղեցկացած սեղանատունը գրկաբաց ընդունում է իր հյուրերին:

Սեղանն օրհնում է Վեհափառ Հայրապետը:

Բացման խոսք է ասում հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը՝ շնորհավորելով բոլոր ներկաների Նոր տարին.

«Նոր տարի է,

Այսօր համայն մարդկությունը մի պահ կրկին կանգ է առնում, հետադարձ հայացք գցում իր անցած ճանապարհի վրա՝ տեսնելու համար ժամանակի և տարածության մեջ իր ծրագրերի, երազանքների իրականացման պատկերը:

Սրտեր փոթորկող նվիրական այս պահին հավաքվել ենք այս անգամ Ղազարապատի վերջերս վերակառուցված միաբանական սեղանատան հարկի տակ՝ ուրախությամբ դիմավորելու նոր տարին և վերանորոգելու ծառայության մեր ուխտը:

Ուրախ ենք նշելու, որ մեր ժողովուրդն իր հայրենի հողի վրա այս տարի ևս գիտության, արվեստի, մշակույթի և տնտեսության բնագավառներում արձանագրել է նորանոր հաջողություններ:

Ուրախությամբ կարող ենք նշել նաև, որ Զերդ Վեհափառության հայրական ղեկավարության ներքո Մայր Աթոռ ս. Էջմիածինը, նրա միաբանությունը, հոգևոր ճեմարանը այս տարի ևս խաղաղ պայմաններում առաջ են տարել իրենց ծրագրած աշխատանքները:

Ճեմարանն այս տարի ևս տվեց իր հոգևոր հունձքը: Դեկտեմբերի 22-ին շրջանա-

վարտ սարկավագներից մեկը կուսակրոն, երկուսը ամուսնացյալ քահանաներ դարձան, իսկ երկու օր հետո, ս. Ստեփանոսի տոնին, երեք շրջանավարտ սաներ սարկավագ ձեռնադրվեցին:

Մեր աշխատանքների մեջ ունեցանք նաև վրիպումներ, որոնց համար կարելի է ափսոսալ:

Վեհափառ Տեր, հոգևոր ճեմարանի տեսչությունը, դասախոսական կազմը և ուսանողությունը հավերժի գիրկը գլորվող այս տարվա վերջին ժամին չեն կարող չհիշել շատ սիրելի Տիրամոր կորուստը:

Սովորական, հասարակ մարդիկ ծնունդն են իրենց մոր, իսկ անձը, երբ մեծ է, պատկանում է իրեն ծնող ժողովրդին: Այս առումով, Վեհափառ Տեր, դուք Լուսավորչի գահի վրա արժանապես բազմելու օրվանից պատկանում եք հայ ժողովրդին:

Ձեզ ծնունդ տվող ժողովուրդը կենդանի է, ապրում և ստեղծագործում է թե՛ մայր հայրենիքում և թե՛ սփյուռքի տարածքի վրա: Թող մեր ժողովրդի, Ձեր հոգևոր զավակների սերն ու հարգանքը ամոքեն Ձեր վշտակիր սիրտը և ուժ պարգևեն Ձեր կյանքի հետագա գործունեության ընթացքում:

Խորհրդավոր այս պահին պատմության մատյանի վրա գրված մի էջ ևս է ավելանում և բացվում չգրված կյանքի մի նոր էջ: Թող այս տարին լինի հույսի, լույսի շողերով պայծառացած կյանքի մի նոր հանգրվան մեր եկեղեցու և մեր ժողովրդի համար, լինի միասնության, խաղաղ ստեղծագործության ժամանակաշրջան:

Թույլ տվեք, Վեհափառ Տեր, հոգևոր ճեմարանի տեսչության անունից շնորհավորել Ձեր Նոր տարին:

Թող Աստված Ձեզ երկար ու երկար կյանք պարգևի՝ խաղաղությամբ ղեկավարելու Հայաստանյայց եկեղեցին:

Շնորհավորելով բոլոր ներկաների Նոր տարին, թույլ տվեք, Վեհափառ Տեր, բաժակ բարձրացնել Մայր Աթոռ ս. Էջմիածնի պայծառության, անսասանության համար, Ձերդ Սրբության առողջության և արևշատության կենացը:

Կեցցե Մայր Աթոռ ս. Էջմիածինը:

Կեցցե ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը:

Կեցցե մեր բոլորիս սիրելի Ամենայն Հայոց Հայրապետը»:

Հոգևոր ճեմարանի ուսանողությունը երգում է «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը:

Ամանորյա սեղանի շուրջ ստեղծվում է ջերմագին, կրոնաբույր և հայրենասիրական մթնոլորտ:

Ի դիմաց միաբանության Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը շնորհավորում է Վեհափառ Հայրապետի Նոր տարին և առաջարկում բաժակ բարձրացնել Նրա կենացը:

Բոլոր ներկաները հոտնկայս բաժակ են բարձրացնում Նորին Սուրբ Օծության արեվշատության կենացը, սրտագին ծափերի ներքո:

Ճեմարանի սաները երգում են Հայրապետական մաղթանքը:

Նոր տարվա ողջույնի և շնորհավորական ջերմ խոսքեր են ասում, ի դիմաց հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի՝ Սամվել Անթոսյանը, և Հակոբ սրկ. Գլընճյանը՝ ի դիմաց ուսանողության:

Այնուհետև գործադրվում է գեղարվեստական կոկիկ մի հայտագիր՝ խինդով և ծիծաղով լցնելով միաբանական սեղանատունը և բոլոր ներկաների հոգիները:

Հանդիսությունն ավարտվում է Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքով ու պատգամով և միաբերան երգված Տերունական աղոթքով:

Ժամը 12-ն է: Եվս մի ակնթարթ՝ և հնչում են Մայր տաճարի զանգերը, հնչում 365 անգամ, վերջին անգամ վերհիշելու համար անցած տարվա ամեն մի օրը:

Մայր Աթոռի միաբանությունը և հոգևոր ճեմարանի ուսանողությունը նոր տարվա իրենց անդրանիկ լռելյայն աղոթքն են մատուցում Աստծուն Մայր տաճարում, որպեսզի նոր տարին լինի խաղաղության, առատության, հայրենիքի բարօրության և հայ ժողովրդի միասնության տարի:

ԱՄԱՆՈՐՅԱ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հունվարի 1-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Մայր տաճարում սկսվում է ամանորյա ս. պատարագը: Պատարագում է տ. Եզնիկ աբեղա Պետրոսյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի, Իշման ս. սեղանի առաջ, հոգեշունչ քարոզ է խոսում տ. Արիս եպս. Շիրվանյանը՝ «Եւ ինձ պարտ է գործել զգործս այնորիկ ու առաքեացն զիս, մինչ աւուր կայ. գայ գիշեր, յորժամ ոչ ոք կարէ գործել» (Հովհ. Թ 4) բնաբանով:

Սրբազան հայրը անդրադառնում է կյանքի ու ժամանակի խորհուրդներին, դրանք ներկայացնում կրոնական մտածողության լույսի տակ, հանգամանորեն կանգ առնում յուրաքանչյուր մարդու կյանքի հաշվեհարդարի և դրանից բխող բարոյական բարիքների վրա:

Վերջում տ. Արիս եպս. Շիրվանյանը մասնավորապես և ջերմ խոսքերով շնորհա-



վորում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Նոր տարին՝ լավագույն ցանկություններով:

Այնուհետև Իջման ս. սեղանի առաջ հանդիսավորությամբ կատարվում է Հայրապետական մաղթանք:

Ս. Պատարագի ավարտից հետո Վեհարանի ընդունարանում Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել Մայր Աթոռի միաբանությանը:

Հանուն Մայր Աթոռի միաբանության, դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը մի անգամ ևս շնորհավորում է Վեհափառ Հայրապետի Նոր տարին:

Նոր տարվա բարեբաստիկ առիթով Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ տ. Վահան եպս. Տերյանը Վեհափառ Հայրապետին է նվիրում հայ մշակույթի բացառիկ մի գանձ՝ մագաղաթյա երկաթագիր մի Ավետարան (8—10-րդ դարի):

Վերջում Վեհափառ Հայրապետը շնորհավորում է Մայր Աթոռի միաբանների Նոր տարին, տալիս նրանց Իր օրհնությունն ու պատգամը:

Մայր Աթոռի միաբանները աջահամբույրով Հայոց Հայրապետից ստանում են 1975 թվականի օրացույց:

ԾՐԱԳԱԼՈՒՑՑԻ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հունվարի 5-ին, կիրակի. Ծրագալոյց Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Օրվա տոնի կապակցությամբ Մայր տաճարում, երեկոյան ժամը 17-ին, պաշտվում է հանդիսավոր ժամերգություն:

Եկեղեցական թափորով Մայր տաճար է իջնում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Հանդիսավոր ժամերգությունից հետո կարդացվում են օրվա խորհուրդը նշող Ավետարանները և ընթերցվածքները, որից հետո սարկավագները Ավագ խորանից ընթերցում են Դանիել մարգարեի «Երից մանկանց» օրհներգությունը:

Այնուհետև սկսվում է ս. պատարագը: Պատարագում է տ. Արիս եպս. Ծիրվանյանը:

Ս. պատարագի ավարտին պաշտվում է նախատոնակի կարգը:

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Երեկոյան ժամը 20.30-ին Ղազարապատի միաբանական սեղանատանը տրվում է ճաշկերույթ, որին մասնակցում են Մայր Աթոռի միաբանությունը և հոգևոր ճեմարանի ուսանողությունը՝ գլխավորությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Ճաշկերույթի ընթացքում, օրվա խորհրդի ներշնչումով, շնորհավորական ջերմ խոսք է ասում Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

Վերջում օրհնության խոսք է ասում Վեհափառ Հայրապետը:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հունվարի 6-ին, երկուշաբթի. Տօն Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Մայր տաճարում պաշտվում է ս. պատարագ և տեղի է ունենում Զրօրհնյաց հանդիսավոր արարողությունը:

Ժամը 10.30-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով իջնում է Մայր տաճար և զգեստավորվում ավանդատանը:

Ժամը 11-ին հնչում են եկեղեցու զանգերը: Սկսվում է ս. պատարագը:

Պատարագում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Ս. խորանին և Վեհափառ Հայրապետին սպասարկում են տ. Արսեն և տ. Գևորգ սրբազանները, գավազանակիր տ. Եզնիկ աբեղան, փեշակիրներ տ. Մասիս և տ. Թորգոմ աբեղաները և սարկավագների դասը:

«Հայր մեր»-ից առաջ, օրվա խորհրդի ներշնչումով, քարոզում է Վեհափառ Հայրապետը (Սույն քարոզը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 3):

Վեհափառ Հայրապետի՝ Ծննդյան սույն քարոզը հունվարի 7-ին, երեկոյան ժամը 23-ին, ձայնասփռվեց Երևանի ռադիոկայանից:

Ս. պատարագի ավարտին կատարվում է Զրօրհնյաց հանդիսավոր արարողությունը՝ ի հիշատակ Հորդանան գետում Քրիստոսի մկրտության ս. Հովհաննես Մկրտչի ձեռքով:

Այնուհետև Վեհարանի ընդունարանում Վեհափառ Հայրապետն ընդունում է բազմաթիվ ուխտավորների, բարեհաճությամբ ստանում նրանց շնորհավորանքները և տալիս նրանց Իր օրհնությունը:

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ. ձեզ և մեզ մեծ աւետիս»: